ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Իրանագետ

# Իրանի եւ ԱՄՆ-ի միջեւ համաձայնության նախանշաննե՞ր

Տպավորությունն այնպիսին է, որ ԱՄՆ նախագահ **Դոնալդ Թրամփը** ձգտում է ավարտին հասցնել Իրանի հետ հակամարտությունը, եւ, կարծես, հակամարտող կողմերի միջեւ Հորմուզի նեղուցի վերաբացմանը միտված պայմանավորվածությունները բավական իրատեսական են:

Դոնալդ Թրամփը մայիսի 25-ին հայտարարել է, որ բանակցությունները «լավ են ընթանում», սակայն, իրեն բնորոշ խոսելաոճով, միաժամանակ զգուշացրել է, որ եթե համաձայնություն ձեռք չբերվի, բախումներն անխուսափելի կլինեն:

Միեւնույն ժամանակ, Իսլամական խորհրդարանի նախագահ **Մոհամմադ Բաղեր Ղալիբաֆի** գլխավորությամբ իրանական պատվիրակությունը երկուշաբթի այցելել է Քաթար: Պատվիրակության կազմում է նաեւ Իրանի արտաքին գործերի նախարար **Աբբաս Արաղչին**: Սակայն դեռ պարզ չէ, թե ինչ հարցեր են քննարկվել հանդիպումների ընթացքում:

Իրանի արտաքին գործերի նախարարության խոսնակ **Էսմայիլ Բաղային** ընդամենը հայտարարել է, որ թեեւ «հարցերի մեծ մասի» շուրջ փոխըմբռնում է ձեռք բերվել, սակայն դեռ շատ աշխատանք կա անելու:

Ինչպես հայտնի է, Ղալիբաֆն անցյալ ամիս Պակիստանում ուղիղ բանակցություններ էր վարել նաեւ ԱՄՆ փոխնախագահ **Ջեյ Դի Վենսի** հետ: Այս պահին, կարծես, ԱՄՆ-ի հետ բանակցությունների հիմնական պատասխանատվությունը վստահված է հենց Ղալիբաֆին:

ԱՄՆ պետքարտուղար **Մարկո Ռուբիոն** Հնդկաստան այցի ավարտին տեղեկացրել է, որ առաջիկա ժամերին հնարավոր է հրապարակվի հայտարարություն, որով պաշտոնապես վերջ կդրվի Մերձավոր Արեւելքում ընթացող պատերազմին:

Հնդկաստանում կայացած մամուլի ասուլիսի ընթացքում Ռուբիոն, առանց մանրամասներ ներկայացնելու, նշել է, որ հնարավոր համաձայնագիրը «մեծապես» կվերացնի Միացյալ Նահանգների մտահոգությունները Հորմուզի նեղուցի վերաբերյալ եւ թույլ չի տա, որ Իրանը ձեռք բերի միջուկային զենք:

Պաշտոնական Թեհրանը դեռեւս չի խոսել հնարավոր համաձայնագրի բովանդակության մասին, թեեւ Իրանի նախագահ **Մասուդ Փեզեշքիանը** օրեր առաջ հայտարարել էր. «Ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի շրջանակներից դուրս եւ առանց ԻԻՀ գերագույն առաջնորդի համաձայնության ու թույլտվության ոչ մի որոշում չի ընդունվի»:

Միեւնույն ժամանակ, հրապարակվել են Թեհրանի եւ Վաշինգտոնի միջեւ հնարավոր համաձայնագրի վերաբերյալ ոչ պաշտոնական եւ դեռեւս չհաստատված տեղեկություններ:

Axios-ը, հղում անելով ամերիկացի պաշտոնյայի, հայտնել է, որ Թեհրանն ու Վաշինգտոնը մոտ են համաձայնագրի ստորագրմանը, որի շրջանակում կերկարաձգվի 60-օրյա հրադադարը, կվերաբացվի Հորմուզի նեղուցը, Իրանին թույլ կտրվի շարունակել նավթի արտահանումը, կանցկացվեն բանակցություններ Իրանի միջուկային ծրագրի սահմանափակման շուրջ, ինչպես նաեւ կդադարեցվի Լիբանանում ընթացող պատերազմը:

Իրանական Tasnim եւ Fars լրատվական գործակալությունները, որոնք մոտ են Իրանի ռազմական եւ անվտանգության կառույցներին, ներկայացրել են իրենց ոչ պաշտոնական վարկածները հնարավոր համաձայնագրի վերաբերյալ, որոնց ընդհանուր բովանդակությունը նման է Axios-ի հրապարակած տեղեկություններին:

### Իրանի եւ ԱՄՆ-ի հնարավոր համաձայնագրի մանրամասները՝ ըստ Axios-ի

Axios-ը, հղում կատարելով ամերիկացի պաշտոնյայի, նշել է, որ Իրանի եւ ԱՄՆ-ի միջեւ ստորագրվելիք հուշագիրը կունենա 60-օրյա գործողության ժամկետ եւ կարող է երկարաձգվել կողմերի համաձայնությամբ:

Ըստ Axios-ի, այդ 60 օրվա ընթացքում Հորմուզի նեղուցը կբացվի՝ առանց նավերից վճար գանձելու, իսկ Իրանը պարտավորվելու է ականազերծել նեղուցը՝ ապահովելով նավերի ազատ երթեւեկությունը:



Փոխարենը, ԱՄՆ-ը կդադարեցնի Իրանի նավահանգիստների շրջափակումը եւ, վերացնելով որոշ պատժամիջոցներ, թույլ կտա Իրանին ազատ վաճառել նավթը:

Թեեւ Իրանը նախկինում բազմիցս հայտարարել է, որ իր միջուկային ծրագիրը բացառապես խաղաղ նպատակներ ունի, Axios-ի տվյալներով՝ այս անգամ Թեհրանը գրավոր պարտավորություն է ստանձնելու «երբեւէ չձգտել միջուկային զենք ստեղծելուն» եւ բանակցել ուրանի հարստացման ծրագրի կասեցման ու հարստացված ուրանի պաշարների դուրսբերման շուրջ:

BBC-ի փոխանցմամբ, տեղեկացված երկու աղբյուր Axios-ին հայտնել են, որ Իրանը միջնորդների միջոցով բանավոր փոխանցել է, թե ինչ զիջումների է պատրաստ գնալ հարստացման կասեցման եւ միջուկային նյութերի պաշարների փոխանցման հարցում:

Axios-ի հաղորդմամբ, ԱՄՆ-ը պատրաստակամություն է հայտնել 60-օրյա հրադադարի ընթացքում բանակցել պատժամիջոցների վերացման եւ Իրանի սառեցված ակտիվների ազատման շուրջ: Սակայն, Վաշինգտոնի պահանջով, դրանց իրականացումը հնարավոր կլինի միայն վերջնական համաձայնագրի շրջանակում՝ ԱՄՆ-ի նախատեսած վերահսկման մեխանիզմների պայմաններում:

Նույն աղբյուրի համաձայն, Իրանը պահանջում է պատժամիջոցների մշտական վերացում եւ իր ակտիվների անհապաղ ազատում, սակայն ԱՄՆ-ը հայտարարել է, որ դա հնարավոր կլինի միայն այն դեպքում, եթե Իրանը գնա «շոշափելի զիջումների»՝ առանց հստակեցնելու, թե ինչ նկատի ունի այդ ձեւակերպմամբ:

Ըստ նույն հաղորդման, վերջին ամիսներին տարածաշրջան ուղարկված ամերիկյան զինված ուժերը կմնան 60-օրյա ժամանակահատվածում եւ դուրս կբերվեն միայն վերջնական համաձայնագրի ստորագրումից հետո:

Իսրայելը դեռ պաշտոնապես չի արձագանքել այս տեղեկություններին, սակայն Axios-ը, հղում անելով իսրայելցի պաշտոնյայի, գրել է, որ վարչապետ **Բենիամին Նեթանյահուն** Դոնալդ Թրամփի հետ հեռախոսազրույցում մտահոգություն է հայտնել, որ Իրանի հետ ԱՄՆ-ի համաձայնագրում կարող է ներառվել նաեւ լիբանանյան հարցը:

Ավելի վաղ Դոնալդ Թրամփը հայտարարել էր, որ Իրանի հարցով զրուցել է Բենիամին Նեթանյահուի հետ՝ այդ զրույցը գնահատելով «շատ լավ»:

### Ի՞նչ են գրում իրանական լրատվամիջոցները

Իրանական Tasnim եւ Fars լրատվական գործակալությունների ներկայացրած մանրամասները հիմնականում համընկնում են Axios-ի հրապարակման հետ, սակայն դրանցում ակնհայտ է ամերիկյան կողմի նկատմամբ անվստահությունը:

Fars-ը գրել է. «Չնայած բանակցությունների ընթացքը դրական է գնահատվում, սակայն մտավախություն կա, որ համաձայնեցված դրույթներից որեւէ մեկի հարցում ԱՄՆ-ը կրկին կփոխի իր դիրքորոշումը»:

Գործակալությունը նաեւ վկայակոչել է Իրանի բանակցային թիմի անդամներին, որոնք նշել են. «Մենք որեւէ վստահություն չունենք ԱՄՆ-ի նկատմամբ, եւ այդ անվստահությունը գտնվում է ամենաբարձր մակարդակում»:

Tasnim գործակալությունն էլ գրել է, որ Իրանը թերահավատ է սառեցված ակտիվների վերադարձի հարցում եւ չի վստահում ԱՄՆ-ի խոստումներին:

Tasnim-ը նաեւ նշել է, որ Իրանի եւ ԱՄՆ-ի միջեւ համաձայնագրի որոշ կետերի շուրջ տարաձայնությունները դեռ պահպանվում են, իսկ ԱՄՆ-ի ստեղծած խոչընդոտների պատճառով գործընթացը վերջնական փուլ չի մտել:

Այս փուլում Իրանի եւ ԱՄՆ-ի միջեւ հնարավոր համաձայնագրի շուրջ հրապարակվող տեղեկությունները դեռ պաշտոնապես չեն հաստատվել, սակայն ակնհայտ է, որ կողմերը փորձում են նվազեցնել լարվածությունը եւ խուսափել լայնածավալ ռազմական բախումից: Հորմուզի նեղուցի վերաբացումը, պատժամիջոցների հնարավոր թուլացումն ու միջուկային ծրագրի շուրջ բանակցությունները կարող են դառնալ տարածաշրջանային կայունության կարեւոր նախադրյալներ: Միեւնույն ժամանակ, փոխադարձ անվստահությունը շարունակում է մնալ գլխավոր խոչընդոտը, եւ վերջնական համաձայնության հասնելու ճանապարհը դեռ լի է անորոշություններով:

# Հասարակական հարցում, հարցախույզ, polls




1 «Յոլա տանելու» փաղաքականությունը միշտ է քանդած թողել մեր տունը: «Վերեւներից» «ուկազանիա»ներով ղեկավարելու՝ սովետական գործելակերպը Հայաստանում 26 տարի հետո դեռեւս շարունակում է գործել, իսկ առավել սաստկացած՝ վերջին 8 տարիներին, երբ ամեն ինչ եւ ամեն բան, ամեն ծրագիր եւ ամեն միտք իրականացվում է մեկ անձի որոշումով: Անձի պաշտամունքը, 40-50 տարի հետո, տակավին առկա է մեր մեջ: Իսկ ժողովուրդը հանդուրժում է, նույնիսկ պարտությունը, նույնիսկ հայրենիքի, առայժմ մի մասի, հանձնումը: Եվ բարձր պաշտվանդանին նստեցնում ապիկար, տգետ, գոռոզ, ինքնասիրահարված ղեկավարին:

Հասարակությունը, ազգաբնակչությունը համոզվա՞ծ է, թե, օրինակ, որ խաղաղության մեջ կամ դռներին է մեր երկիրը: Հասարակությունը հավատո՞ւմ է, համաձա՞յն է, որ ինքն ապրի ադրբեջանաթուրքական ողորմածության, առավել եւս՝ ինչ-որ օտար իշխանության ներքո:

Նման լրջագույն հարցերն անշուշտ կարելի է հանրաքվեով պարզել, որը, սակայն, դանդաղաշարժ գործիք է, նաեւ՝ ծախսատար: Հետեւաբար, փոխարենը, կարելի է գիտականորեն անցկացված հարցախույզերով ճշգրտորեն շոշափել հասարակության կարծիքը եւ զերծ մնալ նման՝ առավել պատասխանատու մեթոդներից:

Առանց հանրային կարծիքի շոշափման, առանց, ինչպես ֆրանսիացիներն են ասում, sondage անելու, առանց մասնագիտորեն polls անցկացնելու, այն էլ մեր ժամանակներում, ինչպե՞ս կարելի է երկիր ղեկավարել, քաղաք ղեկավարել, անգամ՝ գյուղ կամ ձեռնարկ:

# Կենացներ դրսից ու ներսից

⇨1 Այսպիսով` ոչ միայն սովորաբար էկզոտիկ բառապաշարն է միավորում մեր ընտրապայքարի մասնակիցներին, այլեւ այն, որ հիմնական ֆավորիտ ուժերը, իշխանական, թե ընդդիմադիր, զերծ չմնացին այլ պետությունների աշխարհաքաղաքական դիմակայությունը Հայաստան հրավիրողի իրենց կեցվածքից: Նրանց մի մասը դարձել է Ռուսաստանի ու Պուտինի փաստաբանը, մյուս մասը` Արեւմուտքի, ԵՄ-ի եւ Ռուբիոյի, ակամա մոռանալով Հայաստանի բուն շահերի պաշտպանական բնագծերը եւ լիուլի օգտվելով այն հոգեբանական ճնշակներից, այն կենացներից, որոնց վրա էլ հենց շեշտադրում են անում բոլոր տեսակի արտաքին միջամտությունները:

Մեր քաղաքական ֆիգուրներն ու լրատվամիջոցներն ավելի մեծ արագությամբ արձագանքում են Լավրովին, Շոյգուին, Մեդվեդեւին, Պեսկովին, «Կոմերսանտին» ու «Գարդիանին», քան սեփական պաշտոնյաներին են հավատում, ավելի շուտ են տիրաժավորում ռուսական սպառնալիքները գազը թանկացնելու, գազային պայմանագրերը վերանայելու, տնտեսական մյուս սահմանափակումների, Հայաստանին ԵԱՏՄ-ից դուրս հրավիրելու ռուսական մտադրության բարձրաձայնումները, քան դա կանեին այդ սպառնալիքների հեղինակ երկրի լրատվամիջոցները:

Իսկ քաղաքական գործիչների քարոզի եւ հակաքարոզի մեջ այն աստիճան մանրամասնորեն են նկարագրված Հայաստանի, նրա քաղաքական գործիչների թույլ ու խոցելի տեղերը, այնպիսի լիարժեք ինֆորմացիա է դաշտ նետվում Հայաստանի պաշտպանական, անվտանգային հնարավորությունները քննադատելիս, կամ` ներքին կյանքի մասին, որոնց համեմատ **Անդրանիկ Թեւանյանին** ներկայացվող մեղադրանքները մանկական միամիտ թոթովանք են հիշեցնում եւ արժանահավատ չեն թվում` հենց նախընտրական շրջանում ներկայացված լինելու պատճառով:

Էկզոտիկ բառապաշարի առումով եւս մեր ընտրողը հիասթափվելու ոչ մի պատճառ չունի` համբալներից եւ նման կոպիտ բնորոշումներից մերոնք անցել են էկզոտիկայի:




Տղամարդ, տուզիկ, Հիսուս Քրիստոս, խաշլամա, լողացած առյուծներ, զահլեն տանելու ակցիա, «Նոյը, իրեն կինը, իր տղաները, իր հարսները Նոյյան Տապանում», «Ընտամենը մեկ շաբաթվա ընթացքում ընտունելու ենք կարեւորագույն օրենքը», «Կալուգացի լրտեսը պետք է նստի», «Դիվանագիտությունը շփոթում է կռուտիտի հետ», «Վզակոթից պետք է բռնել եւ դուրս շպրտել»: Այս բառերն ու մտքերը, անգրագիտությունը, թվում է, անկապ ենք մեջբերել, շարել իրար կողքի, բայց նրանց մեջ կապ կա` դրանք բոլորը հնչում են ընտրապայքարի ընթացքում եւ լրացնում հնչեցնողների դիմապատկերը:

Ընդ որում` էկզոտիկային մասնակից են դառնում նաեւ հասարակ ընտրողն ու մեր մտավորական առանձին շերտեր. վերջերս մի գրող էր **Սամվել Կարապետյանի** մեջ Հիսուս Քրիստոսին տեսել: Մեր էմոցիոնալ մտավորականության մեծ մասն այդպես էլ չտիրապետեց քաղաքականության այբուբենին եւ իր անձնական սերն ու նվիրվածությունը շարունակում է շփոթել քաղաքականության հետ: Մեր ժողովուրդն առհասարակ դուրս չի գալիս էմոցիայի եւ շահի միջեւ տատանվելուց, ընդ որում` փողի դիմաց քվեն տալու սովորույթը շարունակում է բոլորին քաշել դեպի ընտրական ճահիճը, այնտեղ խրելով նաեւ երկիրը:

Վերլուծելով վերջին շրջանի քարոզարշավը, բաղդատելով բոլոր տեսակի` իշխանամետ եւ ընդդիմամետ սոցիարցումների արդյունքները, փորփրելով չերեւացող իրողությունների գաղտնիմաստները, արտաքին խաղացողների ձգած թելերի շարժումները եւ քաղաքական կյանքի իմացության տարիների մեր փորձառությանն ապավինելով` փոխանցում ենք մեր զգացողությունը: Խորհրդարան անցնելու մինչեւ քսան տոկոսանոց շանս ունի «Հայաստան» դաշինքը, դրանից մի փոքր ավելի` «Ուժեղ Հայաստանը», «Քաղաքացիական պայմանագրի» ստանալիք քվեները չեն ձգի մինչեւ քառասուն տոկոս, անգամ **Գագիկ Ծառուկյանի** ընտրական միավորի խորհրդարան անցնելն է կասկածելի, եթե նկատի առնենք, որ այս ընդդիմադիր շերտի համակիրների այն հատվածը, որը հակված է երկրորդ նախագահին մերձ քաղաքական միավորներին, ավելի շուտ ձայն կտա «Հայաստան» դաշինքին: Բայց չի բացառվում, որ «Բարգավաճ Հայաստանը» հաղթահարի անցողիկ շեմը: Համացանցային տեսանյութերի դիտման ժամանակ ամենաինտենսիվ գովազդն ունեցող **Արման Թաթոյանը** հազիվ թե անցողիկ շեմը հաղթահարի, էլ չասած` որ «Ալյանսի» բացարկից հետո ընտրարշավին մասնակցող մնացած տասնչորս փոքր միավորները եւս անցողիկ քվեի խնդիր կունենան: Մյուս կողմից` ոչ ոք, ամենալավատես իշխանականներն անգամ չեն կարող պնդել, որ «Քաղաքացիական պայմանագիրը» սահմանադրական մեծամասնությանը մոտիկ քվե կստանա: Այնպես որ` կինոն արդեն նոր խորհրդարանի առաջին նիստից է սկսվելու, ու դուք անգամ չեք էլ պատկերացնում, թե ինչ անսպասելի, ընտրողին հուսախաբ անող կոնֆիգուրացիաներ կարող են լինել այնտեղ: Էլ չասած, որ Հայաստանում աշխարհաքաղաքական մրցակցությունը շարունակվելու եւ էլ ավելի այլանդակ դրսեւորումներ է ունենալու նոր խորհրդարանում, քանի որ հին համակարգի հիմնական դերակատարները` պայմանական ռուսամետ, եւ պայմանական արեւմտամետ, նորից դերակատար են լինելու մինչեւ այն ժամանակ, երբ Հայաստանում խելքի կգան եւ նոր, ինքնաբավ ուժեր կստեղծվեն:

Մինչ այդ Աստծուց խնդրենք, որ սադրանքներ, հրահրումներ, արտաքին հետքով խառնակչություններ (տարածաշրջանային մրցակցության ենթատեքստով) չլինեն մեր երկրում, սա` առաջին:

Եւ երկրորդ, հանրային ազդեցություն ունեցող բոլոր գործիչներին, շրջանակներին հորդորենք, որ փողով, նյութական շահագրգռությամբ ընտրելու սովոր մեր բնակչությանը բացատրեն, հասկացնեն, որ այդ տարբերակով ընտրելու դեպքում մի քանի օրվա սոցիալական խնդիր լուծելով` բոլորիս եւ երկրի ապագան է դրվելու հարցականի տակ:

Եւ վերջում.տեսնես ուրիշնե՞րն էլ են հոգնել ինձ նման ընտրարշավի մասնակից` ասես չարենցյան կացնով տաշած դեմքերից, ամեն պահ էկրանից, համացանցից, հեռախոսից աջ ու ականջ մտնողներից` ներկված ու աններկ, սարքված ու անսարք, հայրենասեր ու անհայրենիք, ռուսասեր ու թրքասեր, փրկիչ ու կործանող, կառուցողական ու անկառույց, փողահոտ ու ճենճահոտ... Տեսնես ուրիշնե՞րն էլ այս աստիճանի չեն դիմանում մեզ տրորող ու ճզմող պաթոսի ու ստախոսության գերդոզային ու իմ նման անհամբեր սպասում են այս բոլորի ավարտին` Աստծուց խնդրելով մեր բոլորի ազատումն այս ամեն տեսակի հացկատակներից...

Դիմացեք, մի շաբաթ մնաց...

ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ

# Ապշելու, թե՞... ապշանալու ժամանակը

Գլխագիրն ընթերցելու պահից կարծում եմ գուշակեցիք, թե ինչի շուրջ ենք մտորելու` հայաստանյան մերօրյա միջավայրի, մեր առօրյայի, ապրելու եւ ապրեցնելու միջոցների, Հայաստան երկրով փառավորվելու Բարեբեր հողը կա, կանաչից ու ձմռան սպիտակից պակաս չունենք, ջրերն էլ հոսում են ու հոսում, աշխատող ձեռքերն էլ հրաշքներ են գործում, մայրերի եփածից էլ միայն գովեստի խոսքեր են ասվում: Սակայն արի ու տես, որ ամանորի օրերից հնչող «լավ ասենք, որ լավ լինենք» պարզ ցանկությունն այդպես էլ իրականություն չի դառնում. ո՛չ ամուսնացողներն ու ծնունդներն են ավելանում, ո՛չ էլ անհասկանալի պատահարներն են նվազում, բարեբեր հռչակված վարելահողերն այդպես էլ անհրաժեշտ բերքը չեն հասունացնում, իսկ գայլերն իրենց սեւ գործն են անում հոշոտելով անմեղ գառնուկներին: Եվ` հայաստանցին հայացքն ուղղում է դեպի իշխանությունը, տեղական ու հանրապետական մարմինները, որոնք հաջողությամբ պաշտպանվում են հարցերն ու խնդիրները տարածքային կառույցներ ուղղորդելով, անգամ համատիրություններ անվանվողներին մատնանշելով: Այսպես կայացման ու բարեփոխման կոչված ժամերն ու օրերը շաբաթներ ու ամիսներ են դառնում, միջավայրի գաղջությունը չի անհետանում, ապրել-արարելը հիշողություն է դառնում, Հայաստանի Հանրապետությունն էլ ընդամենը տարածք է հռչակվում: Եվ հարցը` ինչո՞ւ հայրենակիցս, հարազատս, եղբայրս հնչում է ինքնաբերաբար, ուղղակի դաջվում է մեր ինքնության վրա:

Ցավալի է, երբ ասվում է` դե, փոքր երկիր ենք, անգամ սակավահող ու հողազուրկ պետություն է հռչակվում Հայաստանը, ոմանց կողմից նույնիսկ քարաստան է անվանվում: Բազմակի ամոթալի է, երբ նման կարծիք է հնչեցվում իշխանավոր կոչվող այրերի կողմից, ում պարտքն ու պարտավորությունն է փաստարկված դիմակայել այսօրինակ անհեթեթություններին, քանզի դրանք կարող են նաեւ դիտավորությամբ շրջանառվել: Այսօրվա ՀՀ-ն եւ Բելգիա պետությունը գրեթե նույն տարածքն ունեն, մոտ 30-հազարական քառակուսի կիլոմետր: Սակայն արի ու տես, Բելգիայում 12 մլն մարդ է ապրում, ՀՀ-ում` ինքներս գիտենք, այն է` մշտապես նվազող վտանգով: 1 քկմ-ի վրա ՀՀ-ում հազիվ 100 մարդ է ապրում, Բելգիայում` 400 մարդ: Վերջիններիս յուրաքանչյուրը տարվա ընթացքում մոտ 10000 կվտժամ էլեկտրաէներգիա է օգտագործում, հայաստանցին` 2000 կվտժամից մի փոքր ավելի: Ապշելու բան է, քանզի օրեր առաջ ՀՀ-ում վերլուծաբան ներկայացած մեկը հեռուստահարցազրույցի ընթացքում հայտարարեց, որ Հայաստանը էլէներգիա է արտահանում Թուրքիա, առանց որեւէ թիվ նշելու: Վիճակն առավել է խճճում ՀՀ վարչապետը, հայտարարելով, որ հանրապետությունում Մեծամորի ատոմակայանի եռակի հզորության արեւային կայաններ են կառուցվել` 1300 մգվտ: Եռակի հզորության պարագայում հարկ է նկատի ունենալ մոտ 7 մլրդ կվտ էլեկտրաարտադրություն, այն պարագայում, երբ արեւային կայանները 2025 թվականին արտադրել են... մոտ 1 մլրդ կվտժամ էլհոսանք: Այսպիսին են արեւային կոչվող էլկայանների օգտակար գործողության գործակիցները, առանց` քննարկման:

Մեզանում հաճախ է հիշատակվում պետական պարտք ներկայացվող ֆինանսական գործառույթը, որը կրկնապատկվել է գործող իշխանության ութ տարիների ընթացքում, հասնելով 16 մլրդ դոլարի: Որոշ մասնագետներ նշում են նաեւ պարտքի մարման տոկոսադրույքների 2026-ին 1 մլրդ դոլարի հասնող թվի մասին, որով կարելի էր տասնյակ մանկապարտեզների ու դպրոցների կողքին նաեւ առողջապահական, մշակութային ու մարզական հաստատություններ կառուցել, հանգստի գոտիներ ստեղծել: Ավաղ, պարտքերը վերցվել են, իսկ ծախսերի արդյունավետ օգտագործման, հաշվետվողականության մասին ոչ մի խոսք, անգամ ակնարկ: Հազվադեպ հիշողներն էլ անմիջապես պիտակավորվում են, մատնացույց է արվում ասֆալտը, որով հարկ է, որ բեռնափոխադրումներ պետք է իրականացվեն, թե ե՞րբ, որեւէ մեկը չի նշում: Այսօր գրեթե անորոշ է հայկական գյուղի կարգավիճակը, որն առերեւույթ կա, իրականում լուծարվող մի կառույց է ներկայանում: Իշխանությունը փորձում է տնաշինության ծրագրերի օգնությամբ ինչ-որ շունչ հաղորդել իրավիճակին, որի արդյունավետությունն անորոշ է. հողը որպես աշխատատեղ կա, փոխարենը չկա այն մշակելու գործիքակազմը, սկսած վարելու հնարավորությունից, որակյալ սերմից, այն վերամշակելու միջոցներից: Այդպես էլ չի լուծվում գյուղական համայնքներում ներդրումներ իրականացնելու խնդիրը, որը մասամբ կարող է որոշակի շնչառություն հաղորդել գյուղական միջավայրին: Ասենք` ՀՀ բանկերում ֆինանսական միջոցներ կան, հանձինս մեր քաղաքացիների ավանդների, որոնք ահռելի գումարներ են կազմում, արդեն հիշատակված ՀՀ պարտքի տեսքով` 16 մլրդ դոլարի չափով: Այդ ահռելի գումարի անգամ փոքր մասը չի ծառայում գյուղական տնտեսության վերականգնմանը մի պարզ պատճառով` ծրագրերի բացակայության. այսօր ով է հիշում կառավարության գովերգած խելացի անասնագոմերի, սպանդանոցային տնտեսությունների, կոոպերացիոն քայլերի անկատարությունից մինչեւ ձախողումները, որոնց համար ոչ ոք պատասխանատվության չենթարկվեց, այլ խրախուսվեց աշխատավարձերի բարձրացումով, աստղաբաշխական պարգեւավճարների ստացումով, նորանոր խոստումներով:

Այսպես էլ ապրում ենք:

05.05.2026թ.

# «Երբեք չթաքնվես սատանայից»

## *Ամերիկացի գրողի առինքնող վեպը Վանի ինքնապաշտպանության մասին*

ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ






Օրերս ԱՄՆ-ում լույս է տեսել ամերիկացի գրող Էն **Տի ՄկՔուինի** (N.T. McQueen) «Երբեք չթաքնվես սատանայից» խորագրով (Never Hide from the Devil) վեպը՝ նվիրված Մեծ եղեռնի ժամանակ Վան քաղաքի եւ շրջակա գյուղերի հայ բնակչության թուրք ջարդարարների դեմ մղած ինքնապաշտպանական մարտերին: Հեղինակը գեղարվեստական արձակ գրականության մագիստրոսի գիտական աստիճան է ստացել Սակրամենտոյի Կալիֆոռնիա համալսարանից: Հեղինակ է «Between Lions and Lambs» (Առյուծների եւ գառների արանքում, 2011 թ.) եւ «The Cry of Dry Bones» (Չոր ոսկորների ճիչը, 2021) առինքնող վեպերի, որոնցում յուրահատուկ խորաթափանցությամբ է ներկայացնում մարդկային բնավորությունները: Նրա վեպերը դրական արձագանք են գտել մի շարք գրական հանդեսների գրախոսականներում: Ապրում է իր կնոջ եւ դուստրերի հետ Կալիֆոռնիայում: Սիրում է ճանապարհորդել եւ զբաղվել ձկնորսությամբ:

Watertown Cable News-ին տված հարցազրույցում նա խոստովանում է, որ գրքի վերնագիրը վերցված է System of a Down-ի Genocidal Humanoidz (ցեղասպան մարդակերպներ) երգի բառերից, իսկ հայերի ցեղասպանության մասին տարիներ առաջ՝ երեսունամյակից հետո իմացել է «մեր Սակրամենտոյի եկեղեցին այցելած մի հայ ընտանիքից»: Մինչ այդ նա ոչինչ չի իմացել հայերին պատուհասած ողբերգության մասին: Այդ ընտանիքի հետ ծանոթությունից հետո սկսել է առավել հետաքրքրվել եւ խորացնել իր գիտելիքները: Ուրիշ հայ ընտանիքներ սիրով աջակցել են, տրամադրել համապատասխան հուշագրություններ: Իսկ 2017-ին ձեռքն է ընկել Արա Սարաֆյանի հայերենից անգլերեն թարգմանած Ա-Դոյի «Van 1915. The Great Events of Vasbourakan» (Վասպուրականի մեծ դեպքերը, 1914-15 թթ.) գիրքը: Անմարդկային վայրագությունների, բնաջնջման դեմ եւ հանուն արդարության եւ իրավունքների պաշտպանության մղված համերաշխ եւ միասնական ինքնապաշտպանության խիզախ մարտերը միանգամից գրավում են երիտասարդին եւ նա ձեռնամուխ է լինում նոր վեպ գրել այդ մասին:

Նոր գիրքը բաղկացած է 12 մասից եւ 66 կարճ գլուխներից, որոնք ձգվում են ընդամենը մեկ ամիս: Գործողությունները զարգանում են շատ արագ եւ հետաքրքրական միջադեպերով: Տասնչորսամյա Սուրեն Սիմոնյանը սովորական աշակերտ է Վանում, որ ազատ ժամանակը սիրում է անցկացնել իր ընկերների հետ, որոնցից մեկը թուրք Համզան է: Խաղաղ մթնոլորտը եւ առօրյան շրջադարձային կերպով փոխվում է 1915-ի գարնանը: Նա միանգամից հասունանում է եւ հասկանում, որ վտանգի դեպքում միակ միջոցը պայքարելն է եւ ավելի լավ է ուղիղ նայել թշնամու աչքերին, քան հավիտյան ապրել վախի մեջ: «Երբեք չմոռանաս, թե ով ես դու: Երբեք չթաքնվես սատանայից»,- սա է, որ Սուրենը դժվարությամբ հասկանում է:

Վերոնշյալ հարցազրույցի ժամանակ ՄկՔուինը նշում է, որ դիտավորյալ պատանու միջոցով է փորձել զարգացնել իր նյութը եւ դիտավորյալ կարճ գլուխների արագ զարգացող միջադեպերով համեմել գիրքը, ցանկանալով խիզախության օրինակով վարակել նոր սերունդը եւ արագ ընթերցանության հնարավորություն տալ նրան՝ քաջ գիտակցելով, որ նոր տեխնոլոգիաների մեր դարում պատանիները կամ նրանց մեծ մասը խուսափում են ընթերցել հաստափոր հատորներ:

Կոլումբիա համալսարանից դոկտ. **Խաչիկ Մուրադյանի** գնահատմամբ ՄկՔուինի նոր վեպը խիզախության եւ դիմադրության հրաշալիորեն հյուսված պատմություն է, որը վստահորեն կներշնչի երիտասարդներին:

**Համացանցից եւ «Արմինյն Միրոր-Սփեքթեյթրից» պատրաստեց՝ ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ**

# Հնդկական թերթը հայկական եկեղեցու մասին



Հնդկական կենտրոնական «Հինդու» անգլիալեզու թերթի ապրիլի 30-ի համարում հրատարակվել է **Սանջանա Գանեշի** «Տան հնչյունը» հոդվածը Հնդկաստանի Չեննայ (նախկինում՝ Մադրաս) քաղաքի հայկական Սուրբ Մարիամ եկեղեցու զանգերի մասին: Նշվում է, որ դրանց պատմությունը ոչ միայն տեղական ժառանգության, այլեւ հնդկահայ համայնքի պատմական հիշողության կարեւոր մասն է: Եկեղեցին շուրջ երեք դար շարունակ պահպանել է իր առանձնահատուկ ներկայությունը՝ դառնալով հայկական անցյալի կենդանի վկայություն:

Հոդվածում նկարագրվում է, թե ինչպես Հայոց ցեղասպանության հիշատակի օրը եկեղեցու զանգերի ղողանջը տարածվել է քաղաքի փողոցներով՝ ստեղծելով խորհրդանշական ու հուզիչ մթնոլորտ:

Հայերը Չեննայում հաստատվել էին դեռեւս 17-րդ դարի կեսին: Ժամանակի ընթացքում համայնքը զգացել է սեփական աղոթատեղի ունենալու անհրաժեշտությունը, կառուցվել է փոքր փայտաշեն մատուռ, որը հետագայում վերածվել է մեծ եկեղեցու: Այսօր Սուրբ Մարիամ եկեղեցին համարվում է քաղաքի հայկական ժառանգության գլխավոր խորհրդանիշերից մեկը: Եկեղեցու ամենանշանավոր հատվածներից է շուրջ 300-ամյա զանգակատունը, որն ունի վեց մեծ զանգ: Ամենահին զանգը թվագրվում է 1754 թվականով եւ առանձնահատուկ արժեք ունի: Դրա վրա կա նաեւ թամիլերեն արձանագրություն, ինչը վկայում է հայերի սերտ կապերի մասին տեղի արհեստավորների եւ հասարակության հետ: Որոշ զանգեր նվիրաբերել են տեղի հայ բարերար ընտանիքները՝ ի հիշատակ մահացած հարազատների: Իսկ վերջին երկու զանգերը 1837 թվականին ձուլել է հայտնի զանգաձուլող Թոմաս Միրսը Լոնդոնից, ինչը եւս ընդգծում է համայնքի միջազգային կապերը:

Հնդկաբնակ հետազոտող **Աշխեն Խաչատրյանի** մեկնաբանությամբ՝ զանգերը խորհրդանշում են հայկական եւ թամիլական մշակույթների յուրօրինակ հանդիպումը: Դրանք վկայում են, որ Մադրասի հայերը մեկուսացված համայնք չեն եղել, այլ ակտիվորեն համագործակցում էին տեղացիների հետ՝ պահպանելով սեփական ինքնությունն ու միաժամանակ ինտեգրվելով տեղի կյանքին:

Այսօր զանգերը հնչում են ոչ միայն կիրակնօրյա պատարագներին, այլեւ հայկական Սուրբ Ծննդի, Զատկի, Հայոց ցեղասպանության հիշատակի օրվա եւ համայնքային այլ նշանակալի առիթներով: Հոդվածը եզրափակվում է այն մտքով, որ այս զանգերի ձայնը պարզապես հնչյուն չէ. այն հիշողություն է, ինքնություն եւ հայրենիքից հազարավոր կիլոմետրեր հեռու ապրող հայերի համար հոգեւոր կապ անցյալի ու ներկայի միջեւ:

**Ա. Բ.**

# Ամերիկահայ թատերագիրը Փուլիցերյան մրցանակի թեկնածու




Ամերիկահայ դերասանուհի եւ թատերագիր **Թալին Մոնահոնը** հայտնի է իր ինքնատիպ ու սուր երգիծական գործերով: Բոստոնում ծնված եւ Նյու Յորքում բնակվող Թալինն ունի հայկական եւ իռլանդական արմատներ, որոնք հաճախ արտացոլվում են նրա ստեղծագործություններում՝ ինքնության, ներգաղթի, մշակութային հիշողության եւ պատկանելության թեմաների միջոցով: Որպես թատերագիր Թալին Մոնահոնը հայտնի է «Ինչպես լիցքավորել հրացանը», «Ջեյն Էնգր», «Բարի Ջոն Փրոքթորը» եւ հատկապես «Ծանոթացեք Քարթոզյանների հետ» թատերախաղերով: Վերջինս պատմում է ամերիկահայերի երկու սերունդի մասին՝ ներգաղթի, ազգային ու մշակութային ինքնության, ինչպես նաեւ ամերիկյան հասարակությանը «պատկանելու» խնդիրների վերհանմամբ: Պիեսի առանցքում 1920-ականներին ԱՄՆ-ում տեղի ունեցած դատավարությունն է, որի ընթացքում քննվել է հայերի՝ սպիտակ ռասային պատկանելու հարցը: Անցյալ տարի այն ներկայացվել է Նյու Յորքի Սեքոնդ Սթեյջ թատրոնում՝ հայազգի դերասաններ **Թամարա Սեւունցի**, **Անդրեա Մարթինի** եւ **Րաֆֆի Բարսումյանի** դերակատարմամբ, իսկ վերջերս մտել է Փուլիցերյան մրցանակի եզրափակիչ փուլ՝ «թատերգություն» անվանակարգում:

Բացի գրելուց, Թալին Մոնահոնը նաեւ ակտիվորեն զբաղվում է դերասանությամբ եւ դասավանդում է թատերագրություն: 2023 թվականին նրան ներառել են «Նոր բարձրացող թատերական աստղերի» ցանկում:

# Ալեքս Մինասյան. Ապրուստ վաստակել երաժշտությամբ

ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ

***ԵՐԵՎԱՆ-ՆՅՈՒ ՅՈՐՔ*** *Ալեքս Մինասյանը (ծնվ. 1984) ամերիկացի դաշնակահար, մանկավարժ եւ իմպրեսարիո է, որը հայտնի է տարբեր երաժշտական ժանրերում իր բազմակողմանի դրսեւորումներով: Իր կարիերան սկսել է երիտասարդ տարիքում եւ ունի Նյու Յորքի համալսարանի երկու դիպլոմ: Աշակերտել է հանրահայտ ջազ դաշնակահարներ Հենք Ջոնսին, Դոն Ֆրիդմանին, Ժան-Միշել Պիլկին եւ Ջեյմս Ուիլյամսին: Հանդես է եկել այնպիսի նշանավոր բեմերում, ինչպիսիք են «Բըրդլենդը», «Բլյու նոութը», «Ջազ աթ Լինքոլն սենթրը» եւ «Ապոլլո» թատրոնները: Իր կարիերայի ընթացքում հանդես է եկել Ջեյմս Ինգրեմի, Արտուրո Սանդովալի, Շիլա Ջորդանի եւ Հյու Մասեկելայի նման արվեստագետների հետ: Եղել է լեգենդար ջազ երգիչ Ջիմի Սքոթի վերջին դաշնակահարը, նաեւ Մարք Մըրֆիի եւ Բիլի Վերայի դաշնակահարն ու երաժշտական ղեկավարը: Ակտիվորեն ելույթներ է ունենում՝ մասնակցելով խոշոր ջազ փառատոների եւ պարբերաբար հանդես գալով Նյու Յորքում:*

Ալեքսի մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս նրա կայքէջը՝ alexminasian.com

**-Ալեքս, ի՞նչ երազանքներ ունեիք, երբ սկսում էիք Ձեր կարիերան, եւ որքանո՞վ է իրականությունը մոտեցել այդ սկզբնական սպասումներին:**

-Ես պարզապես ուզում էի կարողանալ ապրուստ վաստակել երաժշտությամբ, ինչը մեր օրերում բավական դժվար բան է: Ուզում էի նաեւ նվագել այն մարդկանց հետ, որոնց երաժշտությունը լսելով եմ մեծացել: Մինչ այժմ շատ բախտավոր եմ եղել՝ կարողանալով ամբողջովին աշխատել որպես երաժիշտ եւ միաժամանակ հնարավորություն ունենալ սովորելու եւ նվագելու իմ հերոսների հետ:

**-Ջազային մեկնաբանություններն ու հանկարծաբանումները երբեմն կարող են չափազանց երկար տեւել:**



**Երբեւէ ամբողջությամբ տարվե՞լ եք այնքան, որ նույնիսկ չեք իմացել, թե ինչպես է ավարտվել ստեղծագործությունը:**

-Այս երաժշտությունը կատարելիս պետք է շատ կենտրոնացած լինել: Երբեմն ես իսկապես «կորչում» եմ երաժշտության մեջ, բայց միշտ գիտեմ, թե որտեղ եմ գտնվում ստեղծագործության կառուցվածքի մեջ:

**-Ի՞նչ եք բացահայտել Ձեր մասին Ձեր գործիքի միջոցով, որը այլ կերպ չէիք կարող բացահայտել:**

-Սովորել արտահայտել ինքդ քեզ գործիքի միջոցով: Կարողանալ ինքդ քեզ հասկանալ եւ երաժշտության միջոցով ուսումնասիրել, թե ինչ ես զգում տվյալ պահին: Բացի այդ, բացահայտել եմ համառություն, որովհետեւ առաջ շարժվելու եւ զարգանալու ճանապարհին շատ դժվարություններ կան:

**-Դուք համագործակցել եք բազմաթիվ հայտնի մարդկանց հետ...**

-Այո՛, նվագել եմ լեգենդար ջազ երգիչ Ջիմի Սքոթի հետ, հայտնի որպես Լիթլ (Փոքրիկ) Ջիմի Սքոթ: Նա բեմում շատ արտիստիկ էր եւ ուներ բազմաթիվ երկրպագուներ դերասանական աշխարհից: Նա նաեւ եղել է դերասան-երգիչ Ջո Փեշիի հովանավորն ու ընկերը՝ վերջինիս դեռահասության տարիներին Նյու Ջերսիի Նյուարք քաղաքում: Ջոն հիանալի ջազ երգիչ է եւ երբեմն նույնիսկ մեզ հետ բեմ է բարձրացել:

**-Եվ իմ ավանդական հարցը. Ձեր հայկական արմատները գալիս են...**

-Արեւմտյան Հայաստանից, որն այսօր կոչվում է Արեւելյան Թուրքիա: Սակայն թե որտեղից են՝ չգիտեմ, իսկ ով գիտեր՝ այլեւս ողջ չէ: Մեծ տատիկս փրկվել է Ցեղասպանությունից: Նա տեսել է, թե ինչպես են իր ամբողջ ընտանիքին սպանել աչքի առաջ, որից հետո նա հայտնվել է Սիրիայի որբանոցում եւ ի վերջո տեղափոխվել է Ամերիկա:

Մայրական կողմից ես ֆրանսիական կանադական եւ իռլանդական ծագում ունեմ: Թեպետ դրանք տարբեր են հայկականից, երկու կողմն էլ օժտված են ուժեղ հավատով եւ բարոյական արժեքներով: Ցավոք, հայերեն չեմ խոսում, միայն մի քանի բառ գիտեմ: Երբեմն մասնակցել եմ Նյու Ինգլանդ նահանգի հայկական «քեֆ թայմս» կոչվող միջոցառումներին: Շատ եմ սիրում հայկական խոհանոցը, հաճախ գնում եմ Ուոթերթաուն՝ տեղի հայկական հացատներից իմ սիրելի չորեկը գնելու: Ունեմ նաեւ շատ հայ ընկերներ, եւ երբ ելույթ եմ ունենում, հատկապես Լոս Անջելեսի շրջանում, շատ հայեր են գալիս ինձ աջակցելու:

**-Առհասարակ, ովքե՞ր են Ձեր սիրելի հայ երաժիշտներն ու արվեստագետները:**

-Սիրում եմ ավանդական հայ երաժիշտներից Ռիչարդ Հակոբյանին, Ջոն Բերբերյանին, Մել Բարսամյանին: Կան նաեւ հրաշալի հայ ջազ երաժիշտներ, որոնց հետ նվագում եմ՝ կոնտրաբասահարներ Նոա Կարապետյանը եւ Յան Էշբին եւ թմբկահար Ջաք Մալյանը:

**-Հայաստանը ջազ սիրող երկիր է. երբեւէ եղե՞լ եք Ձեր նախնիների հայրենիքում:**

-Չեմ եղել, բայց շատ կուզենայի: Այնտեղ կան հրաշալի ջազ երաժիշտներ, օրինակ՝ իմ ընկեր, հիանալի դաշնակահար Վահագն Հայրապետյանը...

## «Քարե սիմֆոնիա». Անդրեյ Զագոսկինի հայկական գույները




Մայիսի 16-ին Մոսկվայի մարզի Նովոյոլկովո գյուղի գրադարանում բացվել է նկարիչ **Անդրեյ Զագոսկինի** «Քարե սիմֆոնիա» ցուցահանդեսը՝ նվիրված Հայաստանին: Գրադարանի վարիչ **Սվետլանա Տրոշինան** ցուցահանդեսը բացել է հայկական հեքիաթի ընթերցմամբ եւ տեղեկացրել, որ 2026 թվականը հայտարարված է Ռուսաստանի ժողովուրդների միասնության տարի: Հայերը, կազմելով ՌԴ բնակչության 0,64 տոկոսը (946 172 մարդ), 20 ազգությունների շարքում զբաղեցնում են 7-րդ տեղը:

Մի քանի տարի ապրելով Հայաստանում՝ Անդրեյ Զագոսկինը ստեղծել է հայկական թեմաներով բազմաթիվ երփնագրեր, հիմնականում՝ բնանկարներ եւ եկեղեցիներ, նաեւ՝ «Ախթամար» լեգենդը: Նկարիչը ներկաներին պատմել է Հայաստանի եւ իր աշխատանքների մասին, Երեւանը համեմատել բազմաթիվ մրգերով լցված կլոր սկուտեղի հետ: Զագոսկինը 2013 թվականից ակտիվորեն մասնակցում է ցուցահանդեսների Ռուսաստանում, իսկ Երեւանում նրա անհատական ցուցահանդեսները բացվել են «Փյունիկ» կենտրոնում եւ «Նարեկացի» արվեստի ինստիտուտում:

Ա. Բ.

**Հարգելի բարեկամ,**

Հայաստանի Թեքեյան Մշակութային Միությունը հրավիրում է Ձեզ մասնակցելու **Երվանդ Ազատյանին** նվիրված **«Մատեան Յիշատակի»** գրքի շնորհանդեսին, որը տեղի կունենա մայիսի 29-ին՝ ժամը 16:00-ին, «Թեքեյան» կենտրոնի դահլիճում (հասցեն՝ Երեւան, Խանջյան 50):

**Սիրով կսպասենք**




## Շնորհանդես

### Հրավեր՝ մամուլի աշխատակիցներին

Թեքեյան կենտրոնում մայիսի 29-ին՝ ժամը 16:00-ին տեղի կունենա Երվանդ Ազատյանին նվիրված «Մատեան Յիշատակի» գրքի շնորհանդեսը:




Երվանդ Ազատյան (1935-2023)՝ հայկական աշխարհի ազդեցիկ դեմքերից մեկը:1954-1958 թվականներին եղել է Բեյրութի «Զարթօնք-սպորտ» շաբաթաթերթի հիմնադիր-խմբագիր, 1959-1967 թվականներին՝ Կահիրեի «Արեւ» օրաթերթի խմբագրապետ, 1967-1972 թվականներին՝ Բոստոնի «Պայքար» հաստատության վարիչ-տնօրեն, «Պայքար» գրական եռամսյա հանդեսի, «Արմինյըն միռըր-սփեքթեյթըր» թերթի խմբագրակազմերի անդամ, վերջին տարիներին՝ խմբագիր եւ սյունակագիր, 1971 թվականից՝ Մոնրեալի «Ապագայ» շաբաթաթերթի, 1986 թվականից՝ Նյու Յորքի «Արարատ»՝ անգլերեն հանդեսի, 1991 թվականից՝ Երեւանի «Ազգ» օրաթերթի , 2006 թվականից՝ Բեյրութի «Կամար» գրական հանդեսի հիմնադիրներից եւ գլխավոր աշխատակիցներից:

Հետագա տարիներին ղեկավարելով Թեքեյան մշակութային միության Ամերիկայի եւ Կանադայի Կենտրոնական վարչությունը, նա շոշափելի ազդեցություն է ունեցել սփյուռքի եւ Հայաստանի մամուլի, մշակութային օջախների ու կազմակերպությունների աջակցության հարցում:

Հայաստանի Թեքեյան մշակութային միության անդամ էր, պարգեւատրվել է միության բարձրագույն պարգեւով՝ «Ադամանդակուռ Արարատ» շքանշանով:

*Շնորհանդեսի ավարտին կցուցադրվի Երվանդ Ազատյանին նվիրված ֆիլմը՝ «Հայրենիքի եւ Սփյուռքի միջեւ»:*

Սիրով հրավիրում ենք լուսաբանելու:

Հարգանքներով՝ Հայաստանի Թեքեյան մշակութային միության լրատվական կենտրոն՝

հեռ.՝ 010 55 26 32, 010 57 02 83, 055 63 06 37:

# Վերջին արարը` ինքնուրացում

➩1 Հակված ենք ենթադրելու, թե գերմանացի օրենսդիրները ներքաղաքական եւ արտաքին մարտահրավերների դիմագրավելու այլ օրակարգ ունենալու պատճառաբանությամբ իրենց կարտոնեն մոռանալ «մեղքից մաքրվելու» այդ օրվա հիշատակումը, եւ քանի որ Հայաստանը ինքնասպանության` «ինչո՞ւ չես զոհվել» նոր խոսույթ ունի, գերմանահայ սփյուռքն էլ ներազգային «սեւուսպիտակի», «իրական» եւ «պատմական» Հայաստանի բաժանարար գծին փորձում է մարդկային` «ազատություն Բաքվի բանտում տառապող գերիներին» մտավոր եւ զգայական հավաքական անհապաղ պահանջը լսելի դարձնել, էլ ինչո՞ւ իրենց վաղեմի դաշնակցին` Թուրքիային հիշեցնեն առերեսվելու, ճանաչելու պահանջը, ինչո՞ւ խոսեն, թե 10 տարի անց չեն կատարել բանաձեւում ամրագրվածը` Գերմանիայի ուսումնական հաստատություններում Հայոց ցեղասպանության թեմայի ներառումը, եւ Բրանդենբուրգի օրինակը եզակի թողնելու մասին:

Հատկապես 2020-ի պատերազմից հետո, նկատելի դարձավ, որ թուրքական տարրը հայերի հանդեպ վերբալ ատելությունից ֆիզիկական հաշվեհարդարի է պատրաստ: Գերմանիայում աջծայրահեղականների թվով երկրորդ` «Գորշ գայլերի» 12 000-անոց խմբավորումն ազատ է գործում եւ մարտի 15-ին նրանց` Թալեաթ փաշայի ոգեկոչման հանրահավաքը Բեռլինի ոստիկանությունն արտոնել էր:

(տե՛ս «**Ազգ**» 20-03-2026): Գերմանիան 20-րդ դարասկզբին ապաստան էր տվել թուրքական դատարանի վճռից ճողոպրած Հայոց ցեղասպանության ճարտարապետին` Թալեաթին, նրան պատսպարել, եւ մեկ դար անց էլ նրա հիշատակի փառաբանումն է արտոնում: Սա հայության գոյության, անվտանգության հանդեպ ազդանշան չէ՞:



Գերմանիան «Հիշողության մշակույթ» ձեւավորած երկիր է, եւ երկրում բնակվող հրեաները այդ մշակույթից ոչ այնքան օգտվող, որքան այն կենդանացնող, այն խնամող հանրությունն են: Աշխարհում հակահրեականության աճ կա, Իսրայելի վարած քաղաքականության պատճառով նաեւ անզուսպ վերելք է ապրում Գերմանիայում, բայց «Հիշողության մշակույթ»ի ձեւավորած ամենօրյա պարույրը զսպանակի մեջ ձգում, խեղդում է հրեաների կյանքին սպառնացող վտանգավոր խոսույթը: Նրանք չեն դադարում հիշեցնել, որ դահիճ Գերմանիան թեեւ քավել է իր մեղքը, բայց պարտավոր է ամեն օր վերահաստատել իր պարտավորությունը: Եթե Թուրքիան ուրանում է, Ադրբեջանը ոչ միայն ամեն օր սպառնում է բառերով, այլ գրավել է ՀՀ-ի 240 կմ-ը, իսկ Գերմանիայում Բունդեսթագի բանաձեւով հայերիս տրվելիք անվտանգության երաշխիքների մասին չենք հիշեցնում, եւ պաշտոնական Բեռլինը շեշտում է, թե ուրախ է ՀՀ-Ադրբեջան-Թուրքիա խաղաղության եւ հաշտության շուրջ, այլեւս ի՞նչ պահանջենք, ինչո՞ւ պահանջենք:

Իսկ եթե լռենք, մեզ կպաշտպանի՞ այդ դավադիր լռությունը, կամ ՀՀ դեսպանի «ցեղասպանություն» բառը «ողբերգություն» բառով քողածածկելը:

Գերմանական Կասսել քաղաքում ապրիլի 9-12-ին AIM-together akademie-ի համաժողովի թեման «Ներխմբային ռասիզմն» էր, որին հայերի հետ մասնակցում էին քրդերը, հույները, ասորիները, հրեաները, սինտի եւ ռոմա (գնչու) համայնքից:

Գերմանահայ ուսանողական «Միասին» միության անդամներ **Դավիթ Շահբազյանն** ու **Սաթենիկ Գույումճյանը** հստակ օրինակներով անդրադարձել են հակահայկական ռասիզմի դրսեւորումներին` թե՛ Գերմանիայում, թե՛ աշխարհում, ներկայացրել են Արցախյան հակամարտության պատճառով բորբոքված հակահայկականությունը Ադրբեջանում, Թուրքիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, սոցցանցերում, հակամարտությունից դուրս` հակահայկական դրսեւորումները Երուսաղեմում: «Միասին»ը գերմանահայ համայնքում անանուն հարցում է անցկացրել, որի պատասխանները մտահոգիչ են, հարցվածների 71 տոկոսը խոստովանել է, որ Գերմանիայում ճանաչում է հակահայկական ռասիզմը, զգացել է վերբալ կամ ֆիզիկական բռնություն: Չեմ կարծում, թե բռնության ենթարկվածները դիմել են ՀՀ դեսպանությանը: Ուրախացնող մի հանգամանք կա` գերմանահայ երիտասարդությունը, որքան էլ ընկճված` իրավագիտակից է եւ զոհի բարդույթը ոչ թե շրջանցել է, այլ նոր զոհ չի ուզում լինել, թեկուզ խաղաղության քողի տակ:

Ապրիլի 24-ին, 25-ին, 26-ին ԳԴՀ տարբեր քաղաքներում գերմանահայ համայնքային երիտասարդությունն էր Հայոց ցեղասպանության հուշահանդեսների կազմակերպիչն ու ամբիոնից ելույթ ունեցողը, որ թե փոխանցում էր իր նախնիների բանավոր եւ գրավոր պատմությունը, թե՛ վստահեցնում, որ տեր է իր պատմության, իր ժառանգության, հետեւաբար` Հիշողության: Մոռացումը ոճրի կրկնություն է ծնելու: Դյուսսելդորֆի համալսարանի դահլիճում հայ ուսանողները` **Մելանի Մարտիրոսը, Անահիտ Պադարյանը, Արփի** եւ **Սաթենիկ Գույումճյանները** բարձրաձայնեցին, թե իրենց ընտանեկան պատմություններից են ճանաչում դահիճին, չեն ներելու ուրացումը, պահանջելու են ճանաչում: Միջազգային իրավունքը հայերին չի զրկել արդարության վերականգնման պահանջից: «Ուզեցին հայերիս բնաջնջել, չհաջողվեց դա 1915-ին, նորից փորձեցին` Ադրբեջանին նեցուկ կանգնեց Թուրքիան` վարձկաններով, Արցախը հայաթափվեց, դարձյալ հայրենազրկում եղավ, բայց դահիճը չհաղթեց: Մենք կանք եւ լույս ենք տալիս կյանքին` Հայաստանում, թե Սփյուռքում: Եւ ինչպես գերմանահայ երիտասարդ արձակագիր **Լաուրա Ցվիրտնիան** է ձեւակերպել` «Ցեղասպանության վերջին արարը ուրացումն է, ամենավերջինը` ինքնուրացումն է», ասաց Սաթենիկը: Հատկապես նրա խոսքին արձագանքելով քուրդ, հույն, պարսիկ, գերմանացի, հրեա ուսանողական միության անդամներն ի նշան համերաշխության ծափահարեցին:

Ֆաշիզմի դեմ միասնական պայքարի նոր փուլ է սկսվում` Հիշողության մշակույթի երկրում` Գերմանիայում, եւ ջահակիրը գերմանահայ ուսանողությունն է:

# «Դուրս քաշել ԵԱՏՄ-ից եւ գրավել գազի շուկան. ինչ է Բաքուն ուզում Հայաստանից». Eurasia Daily



Իսկ ի՞նչ է ընդհանրապես պետք Ադրբեջանին Հայաստանից` Ղարաբաղից հետո,- այս հարցին է անդրադարձել ադրբեջանական «Ուղուր Մամեդով» թելեգրամյան ալիքի հեղինակը:

«Զանգեզուրի միջանցքը` ինքնին հասկանալի է: Այն արդեն կարելի է համարել մերը, եթե, միայն, ԱՄՆ-ի հետ հարաբերությունները չփչանան (Զանգեզուրի հարցում նրա հայտնվելը չեմ համարում Ադրբեջանի համար բարիք)»,- գրում է ալիքի հեղինակը:

Բացի այդ, ադրբեջանցի մեկնաբանի կարծիքով, Բաքուն Հայաստանը կունենա իր գրպանում, երբ եւ եթե հաջողվի իրականացնել այն, ինչ արվել է Վրաստանում, որտեղ ադրբեջանական պետական «ՍՕՔԱՐ» ընկերությունը գնել է գազատար ցանցը:

«Ադրբեջանական գազը պետք է հասնի հայերին եւ երկրի ներսում բաշխվի ադրբեջանական խողովակաշարերի միջոցով: Այստեղ անխուսափելիորեն կբախվեն Ադրբեջանի շահերը եւ Ռուսաստանի շահերը` իր «Գազպրոմ Արմենիա» ընկերությամբ եւ գազի արտոնյալ մատակարարումներով: Ռուսաստանի հետ պատերազմելը մեր շահերից չէ: Հետեւաբար սեւ աշխատանքը պետք է կատարի Նիկոլ Փաշինյանը: Դուրս քաշել Հայաստանը ԵԱՏՄ-ից` գազի նրա գրեթե ձեւավորված ընդհանուր շուկայով: Գժտեցնել Ռուսաստանի հետ: Եվ Ռուսաստանի ձեռքից խլել գազի ընկերությունը, ազգայնացնել այն: Այդ ժամանակ կգա Ադրբեջանը: Հակառակ դեպքում մեր ինչի՞ն է պետք Փաշինյանը»,- եզրափակել է Ուղուր Մամեդովը:

**Գ. Մ.**

# Գրենլանդիան մերժում է ԱՄՆ` ինքնիշխանության խայծը

➩1 Հունվարին կղզու 57 000 բնակիչներին **Թրամփը** սպառնացել էր, թե կենթարկեցնի ԱՄՆ-ին, չհամաձայնելու պարագայում` ռազմական միջամտությամբ: Տեղական իշխանության ներկայացուցիչները վստահեցրել էին բնակիչներին, թե որեւէ պարագայում տարածքը վաճառքի ենթակա չէ, այն պատկանում է կղզու բնակիչներին: Դիմադրությունը սակայն բնավ չի նվազեցնում ԱՄՆ-ի` հետապնդած նպատակին հասնելու համառությունը, եւ մայիսի 22-ին կղզի այցելած ԱՄՆ բանագնացը խոսել է կղզու անկախության մասին: « Մի շարք անհավանական հնարավորություն կա Գրենլանդիան կախյալ վիճակից լիովին անկախ, ինքնիշխան դարձնելու», տեղական Sermitsiaq թերթին ասել է ԱՄՆ հատուկ բանագնաց **Ջեֆֆ Լենդրին**, ինչպես ծանուցում են գերմանական ԶԼՄ-ները` հավելելով`«նախագահ Թրամփը այն տնտեսապես անկախ դարձնելու մտապատկերն ունի, եւ դա հնարավոր է»: Կղզին հարուստ է բնական պաշարներով, բնակիչների մեծ մասը երազում է, որ Դանիայից մի օր անկախ լինի Գրենլանդիան, բայց Դանիայի հետ տնտեսական հարաբերություններով պայմանավորված` տեղական իշխանությունը քաղաքական օրակարգում դեռ այդ` «լիովին ինքնիշխան» լինելու հարցը չի ընդգրկել: Գերմանական ԶԼՄ-ները հստակ չեն ասում, բայց հուշում են, մենք բարձրաձայնենք` ստրկացման նոր անունն է` լիովին ինքնիշխանություն:



**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ**

# Հետախուզությունների դերը իրանական պատերազմում

**ՎԼԱԴԻՄԻՐ ԴԱՐԲԻՆՅԱՆ**

*Անվտանգության հարցերով փորձագետ*

Աշխարհի բոլոր հատուկ ծառայությունների շարքում ամենախարդավանքներով լի հետախուզությունը իսրայելական «Մոսսադն» է: «Մոսսադը» համարվում է հատուկ ծառայությունների ինստիտուտ: Այդ ինստիտուտում տարածված կարգախոսներից մեկը հետեւյալն է՝ «Խելացի եւ կոշտ մարդը լավագույնս է հարմարեցված խաղալու համար»:

ԱՄՆ-ի հետախույզները իրենց գործակալությունը՝ «ԿՀՎ»-ն անվանում են «Կոմպանիա»:

Նախորդ երկու հոդվածներումս («ԱԶԳ» N 009-13-19 մարտ 2026թ. եւ «ԱԶԳ» N 013-10-16 ապրիլ 2026թ.) գրել էի, թե ինչպես սկսվեց պատերազմը Իրանի դեմ 2026թ փետրվարի 28-ին, կիբեռպատերազմի ի՞նչ միջոցներ օգտագործվեցին, ովքե՞ր զոհվեցին պատերազմի հենց առաջին ժամերին, ի՞նչպես հայտնաբերվեցին պետության ռազմաքաղաքական ղեկավարների գտնվելու վայրերը եւ այլն: Այժմ հրադադար է, կարծես թե, բայց դեռ պատերազմի վերջը չէ:

2026թ Իրանի դեմ սկսված պատերազմը մեկ անգամ եւս ցուցադրեց, թե ժամանակակից ռազմական կոնֆլիկտները ինչպես են ղեկավարվում հետախուզական տվյալների հիման վրա: Ինչպես հոդվածներում նշել եմ, հետախուզական տվյալների մեջ ընդգրկվում են գործակալական ցանցից եւ տեխնիկական հսկողությունից ստացված տեղեկատվությունները: Իհարկե, հարկ է նշել, որ այժմ ակտիվ հետախուզական գործառույթներին ավելացել է նաեւ արհեստական բանականությունը: Հիմա ժամանակակից տեխնոլոգիաներով զինված հետախուզությունը հեշտությամբ հայտնաբերում է հակառակորդի խոցելիությունը, վերահսկում եւ արագացնում է որոշումների կայացումը, ռազմական գործողությունների ընթացքը:

Հետախուզության ակտիվ գործառույթների դեմ հիմնական պայքարող ուժը տվյալ պետության, հատուկ ծառայության հակահետախուզական ստորաբաժանումներն են:

Վերադառնանք հետախուզության կարգավիճակին:

Այսօրվա դարաշրջանում գործակալական ցանցի եւ տեխնիկական հետախուզության աշխատանքները համակարգվում են «Մոսսադում», «ԿՀՎ»-ում (Իսրայելի եւ ԱՄՆ-ի հետախուզությունները), ինչպես նաեւ արեւմտյան մյուս հատուկ ծառայություններում: Ավելի պարզ լեզվով՝ տեղի է ունենում հետեւյալը. այն տեղեկատվությունը, որ ստացվում է տեխնիկական հետախուզության միջոցով, օրինակ՝ այաթոլլայի տեղաշարժերը, աշխատանքային գրաֆիկը, զեկուցողների ընդունելության ժամերը եւ այլն, փոխկապակցվում է գործակալական ցանցի միջոցով ստացված ինֆորմացիայի հետ: Եվ ճիշտ հակառակը: Միեւնույն ժամանակ բաց աղբյուրներից, ենթադրենք, ստացվում է տեղեկատվություն, թե պետք է տեղի ունենա հանդիպում հոգեւոր առաջնորդի ու իսլամական հեղափոխության հրամանատարի միջեւ, անմիջապես, մյուս երկու ցանցերի միջոցով սկսվում է որոնողական աշխատանքը եւ հայտնաբերվում է հանդիպման վայրը, ամսաթիվն ու ժամը: Ահա եւ հետախուզական աշխատանքը ամբողջ լանդշաֆտում: Այս պարագայում հաճախ օգտագործվում է նաեւ «արհեստական բանականությունը», սակայն չպետք է մոռանալ, որ «ԱԲ»-ից չափից դուրս կախվածությունը առանց համապատասխան մարդկային հսկողության, կարող է հանգեցնել վնասների ռազմական հարթակներում (военные платформы) եւ մարդկային մեծաքանակ զոհերի:

Ուզում եմ նշել նաեւ, որ «Anthropic» ընկերության («Արհեստական բանականություն» մշակող ընկերություն) եւ «Պենտագոնի» միջեւ շատ վիճելի հարցեր կան, մանավանդ մոդելները շահագործելու ոլորտում, բայց այնուամենայնիվ «Claude of Anthropic» կոդը իրանական պատերազմում օգտագործվել է ԱՄՆ ռազմա-օդային ուժերի կողմից, ինչպես հետախուզական տվյալների սինթեզի (համադրման) նպատակով, թիրախների նույնականացման համար, այնպես էլ իրական ժամանակահատվածում: Այս գործընթացը օգնել է ամերիկյան եւ Իսրայելական զորքերին ավելի արագ թիրախավորել օբյեկտները:

Սակայն կա նաեւ հետեւյալ պրոբլեմը: «Արհեստական բանականությունից» չափից դուրս կախվածությունը ինչպես նշել եմ վերեւում, կարող է խոցելիություն առաջ բերել: Ինչպես ասում են՝ առաջացնել «պատերազմի մառախուղ» (fog of war -Туман войны): ԱՄՆ-ի զինված ուժերի չափից դուրս կախվածությունը «ԱԲ» - «Claude» մոդելից Իրանին հնարավորություն տվեց հրթիռային հարվածներ հասցնել «Amazon Web Services» (AWS) Քուվեյթի տվյալների մշակման կենտրոնին «կուրացնելով» ամերիկյան որոշ ուժերին տեղաբաշխված այնտեղ:

Միեւնույն ժամանակ, ԿՀԿ (ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչությունը) ակտիվորեն հրապարակում է հրահանգներ ֆարսի լեզվով սոցիալական ցանցերում կոչ անելով քաղաքացիական հասարակությանը դիմադրել իշխանություններին եւ փոխել քաղաքական ռեժիմը: Ի պատասխան, իշխանությունները Իրանում փակել են համացանցը: Միեւնույն ժամանակ ԿՀՎ-ն մշակում է նախագծեր, ըստ որոնց Իրանում զինվում են քրդական ուժերը: Նրանց խնդիրն է ներգրավել Իսլամական հեղափոխության պահապանների ուժերին քրդերի հետ ռազմական կոնֆլիկտում:

Ինչ խոսք, ԱՄՆ եւ Իսրայելի համատեղ հարձակումը ահռելի վնասներ հասցրեց Իրանի տնտեսությանը, պաշտպանական համակարգին, ոչնչացվեցին ռազմավարական օբյեկտներ ամբողջ երկրում: Սպանվեցին մի խումբ կրոնական եւ ռազմա-քաղաքական բարձրաստիճան ղեկավարներ: Հարց է առաջանում, որքա՞ն դեռ կարող է Իրանը պահել իր կոշտ ռեժիմը, պահանջել բանակցություններ, ամեն տեսակ սահմանափակող տնտեսական սանկցիաների վերացում, Հորմուզի նեղուցում օտարերկրյա նավթատար տանկերների նավարկության արգելում, պատերազմական վնասի փոխհատուցում, սառեցված ակտիվների ապաշրջափակում եւ այլն:

Միեւնույն ժամանակ հարկ է նշել, որ Իրանում եւ ռազմական պոտենցիալի մեծ մասի պահպանումը մտահոգությունների մեծ աճ է ապահովել ԱՄՆ-ի եւ նրա դաշնակիցների մոտ:

Չէ՞ որ ԱՄՆ-ի ռազմա-քաղաքական ղեկավարությունը պետք է մտածի նաեւ իր ռազմամթերքի որոշակի քանակի պահպանության մասին:

Ռազմամթերքի որոշակի քանակ է անհրաժեշտ ԱՄՆ-ին, եթե հանկարծ հավանական ռազմական կոնֆլիկտներ սկսեն Չինաստանի եւ Հյուսիսային Կորեայի հետ: Նշվում է, որ ԱՄՆ-ի Զինված ուժերը այս պատերազմի ընթացքում օգտագործել են 1100 «Սթելս» թեւավոր հրթիռներ, 1000 «Տոմահավք» հրթիռներ, 1300 «Patriot» ՀՕՊ համակարգի հրթիռներ եւ այլն: Այս պահուստները լրացնելու համար բավականին ժամանակ եւ միջոցներ կպահանջվի: Ահա եւ պատճառներից մեկը, թե ինչու նախագահ Թրամփը հապճեպ մեկնեց Պեկին, նախագահ Սի Ջին Պինի հետ բանակցություններ վարելու:



Եվ այսպես՝ բանակցությունների ընթացքում, որոնք վարվում են Պակիստանի միջնորդությամբ, ԱՄՆ-ի եւ Իրանի միջեւ կան առանցքային երկու անհամաձայնություններ

1 Հակադիր դիրքորոշումներ ուրանի պաշարների վերաբերյալ:

Նախագահ Թրամփը պահանջում է հանձնել հարստացված ուրանի պաշարները, խոստանալով վերադարձնել դրանք որոշ ժամանակ հետո:

Իրանի նոր հոգեւոր ղեկավարը որոշում է կայացրել, որ ուրանի պաշարները չպետք է դուրս տարվեն երկրից:

2 ԱՄՆ-ը դեմ է ծովային նոր հարկերին Հորմուզի նեղուցում, որտեղով մինչ պատերազմը անցնում էր աշխարհի նավթի եւ գազի պաշարների մեկ հինգերորդ մասը:

Իրանը հայտարարել է, որ կբացի նեղուցի նավարկությունը բարեկամ երկրների համար, որոնք չեն խախտի իր պայմանները, ներառյալ՝ հարկային վճարումները:

Այս ռազմական կոնֆլիկտի կամ ավելի ճիշտ պատերազմի ընթացքում Իրանի հետախուզական ողջ ապարատը՝ հետախուզության եւ անվտանգության նախարարությունն ու Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի հետախուզությունը (ինչպես նաեւ Ռուսաստանի եւ Չինաստանի հետախուզական ապարատների կողմից տրամադրվող տեղեկատվությունները) ակտիվացրել են իրենց գաղտնի գործառույթները՝ սատարելով «Դիմադրության առանցքներին»:

Դրանք իրենց կողմից լիազորված տարածաշրջանային ուժերն են (прокси силы региона) «Հեզբոլլահը» Լիբանանում, եւ տարբեր աշխարհազորայիններ Իրաքում ու Եմենում:

Պետք է նշել, որ Իրանի կառավարությունը բավականին բարդ թիրախ է: Իսլամական պետությունը հեշտությամբ չի փլուզվի: Գուցե ոմանց թվա, որ Խամենեիի ֆիզիկական լիկվիդացիան դա ռազմա-քաղաքական ծրագրերի իրականացում է, այսինքն՝ հաղթանակ է: Ո՛չ:

Պարզապես կարող է առաջանալ իշխանության վակուում, որը կփորձեն յուրացնել տարբեր ուժեր, այդ թվում եւ զինված խմբավորումներ: Ըստ երեւույթին, հավանական է, որ իշխանությունը գրավի Իսլամական Հեղափոխության Պահապանների Կորպուսի ռազմական ղեկավարությունը եւ իհարկե դրանով չի լուծվի Թրամփի ադմինիստրացիայի պրոբլեմները Իրանի հետ, հակառակը՝ երեւի խորանան...

***

Իրանում հատուկ ծառայությունները բավականին բարդ եւ փոխկապակցված ցանց են կազմում պետական ինստիտուտների կազմում: Հիմնականում 2 դոմինանտ ուժեր են գործում պետության ներսում՝ Հետախուզության եւ անվտանգության նախարարությունը (Misitry of Intelligence and security) եւ Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի (IRGC) հետախուզությունը:

Հարկ է նշել, որ այս պատերազմը Իրանի ուժային կառույցներում եւ հատուկ ծառայություններում կհանգեցնի ակտիվ, անհրաժեշտ եւ անհապաղ, կառուցվածքային, հրամանատարական եւ վերահսկողական փոփոխությունների:

Այս պահին ԻՀՊԿ նոր հրամանատար՝ գեներալ-մայոր Ահմեդ Վահիդին է փաստորեն թելադրում պետական ռազմավարությունը եւ ամբողջ հետախուզական համաստեղության գործառույթները:

Այս ժամանակահատվածում, անկախ կորուստների թվից, ըստ որոշ իրանական աղբյուրների ԻՀՊԿ-անի մոտավորապես 190000 գործող բանակ (որը չի մտնում Զինված ուժերի թվաքանակի մեջ) եւ մոտավորապես 1 մլն «Բասսիջ» կամավորական բանակի զինվորականներ: Այս թվերը խոսում են այն մասին, որ ցամաքային գործառույթները անցկացնել Իրանի դեմ անհնար է:

Ընդգծենք նաեւ, որ Իրանի պառլամենտը լիովին սատարում է ԻՀՊԿ-ին եւ նրա որոշումները:

Այս պատերազմի վերջանալը եւ խաղաղությունը շատ անհրաժեշտ է մեր տարածաշրջանին:

***

Վերջաբանում եւս մի տեղեկատվություն, որը առաջին հայացքից գուցե ընթերցողիս թվա, թե կապ չունի շարադրված թեմայի հետ: Բայց իրականում ունի, եւ խորքային:

Շվեդիայի կառավարությունը որոշում է ընդունել (2025թ. հունիսին) հիմնել քաղաքացիական Արտաքին Հետախուզության ծառայություն, գտնելով, որ աշխարհաքաղաքական այս բարդ իրավիճակում միայն ռազմական հետախուզություն պահելը պետության համար բավարար չէ: Այդ հետախուզությունը (կրճատ UND) կհամագործակցի ռազմական հետախուզության, ինչպես նաեւ ռադիոէլեկտրոնային հետախուզության (FRA) գերատեսչության հետ: Այս կազմակերպության հիմնադրումը պետության բյուջեից կստանա 2,8 միլիարդ շվեդական, կրոն կամ 302 մլն դոլար: Ինչպես հայտնի է Շվեդիան եւ Ֆինլանդիան ընդգրկվեցին ՆԱՏՕ-ի կազմում 2024թ. մարտին:

Շվեդիան հայտարարեց, որ գլխավոր ռազմական սպառնալիքը իրենց եւ ՆԱՏՕ-ի բլոկի համար հանդիսանում է Ռուսաստանը:

Նոր կազմակերպությունը կսկսի գործել 2027թ. հունվարի 1-ից:

# «Քաղաքակիրթ ապահարզան» արտահայտությամբ ի՞նչ էր հասկացնում Պուտինը

ՍՈՒՐԵՆ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ
Միջազգայնագետ, ԱՄՆ արտաքին քաղաքականության փորձագետ

Վերջին ժամանակներում քննարկման գլխավոր թեման Հայաստանում Եվրոմիությանը ինտեգրման հարցն էր, որի շուրջ կարծես վերլուծությունների եւ կարծիքների պակաս չէր զգացվում: Զարմանալի չէր նաեւ, որ Ռուսաստանի Դաշնության նախագահ **Վլադիմիր Պուտինն** էլ իր հարցազրույցներից մեկում անդրադարձավ այդ խնդրին: Այդ հարցազրույցի ընթացքում նա Հայաստանի իշխանություններին խորհուրդ տվեց հանրաքվե անցկացնել եւ պարզել՝ Հայաստանը շարունակո՞ւմ է մնալ Եվրասիական Տնտեսական Միության կազմում, թե՞ շրջվում է դեպի Եվրոմիություն: Նա նշեց, որ բազմիցս այդ հարցը քննարկել է ՀՀ վարչապետ **Նիկոլ Փաշինյանի** հետ, ավելացնելով, որ Ռուսաստանը պաշտպանում է Հայաստանի շահերին համապատասխանող ցանկացած որոշում: Նա մասնանշեց հայ ժողովրդի հետ ունեցած Ռուսաստանի դարավոր եւ առանձնահատուկ հարաբերությունները եւ հայտարարեց, որ Ռուսաստանը դեմ չի լինելու ՀՀ շահերին ի նպաստ առնված որոշմանը:

Առաջին հայացքից Պուտինի խոսքերը կարող են զարմանալի թվալ՝ հաշվի առնելով ՌԴ-ի եւ Եվրոմիության միջեւ առկա թշնամանքը, լարված հարաբերությունները եւ հատկապես ՌԴ-ի վերաբերմունքը իր ավանդական ազդեցության ոլորտ հանդիսացող տարածաշրջան թափանցելու ԵՄ-ի քաղաքականությունը: Նրա արտահայտությունը, անշուշտ, կարելի է համարել դիվանագիտական լեզվով հնչած խոսույթ, որի ենթատեքստում այլ իմաստներ են թաքնված: Իմ կարծիքով, պատկերը բավականին բարդ է: Կարեւոր է հասկանալ, որ բոլոր փաստերը, հատկապես վերջին շաբաթների զարգացումները ցույց են տալիս, որ Հայաստանը մտադիր չէ անդամակցելու ԵՄ-ին: Այդպիսի մտադրություն նա չունի, եւ Մոսկվան քաջատեղյակ է այդ մասին: Երեւանը ԵՄ-ին անդամակցելու ռազմավարական նպատակ չունի եւ սա հասկանալի է, ոչ միայն Մոսկվայում, այլեւ Բրյուսելում, Վաշինգտոնում ու Երեւանում: Ավելին, Հայաստանի ԵՄ ինտեգրումը ողջունելի չի լինելու ոչ Մոսկվայում կամ Բրյուսելում, ոչ էլ Վաշինգտոնում կամ Երեւանի որոշ շրջանակներում: Այնպես որ, նման արտահայտություններ անելիս, ՌԴ նախագահը քաջատեղյակ է՝ ՀՀ-ն ոչ նպատակ, ոչ էլ մտադրություն ունի անդամակցելու ԵՄ-ին: Փաշինյանի հետ իր հանդիպումների ընթացքում ԵՄ-ի նկատմամբ ՀՀ-ի ընդլայնված տեսլականն ամենայն հավանականությամբ քննարկված պետք է լինի եւ ՌԴ նախագահը տեղյակ է ՀՀ-ի իսկական ռազմավարական նպատակների մասին: Հետեւաբար պետք է ենթադրել, որ Պուտինի խոսքերը սոսկ հրապարակայնորեն ամրապնդել են այն գաղափարը, թե Հայաստանը ինքն էլ իրապես հետամուտ չէ ԵՄ անդամակցությանը, եւ եթե նման մտադրություն լինի, ՀՀ իշխանությունները անպայման հանրաքվե կանցկացնեն այդ խնդրի կարգավորման վերաբերյալ:




Պուտինը նաեւ հասկանում է, որ ՀՀ իշխանությունները չեն ցանկանում նման հանրաքվե անցկացնել եւ եթե նույնիսկ անցկացնեն, վստահ է, որ անհրաժեշտ ցանկալի արդյունքը չի գրանցվելու, ո՛չ մասնակցող քվեարկողների թվաքանակի, ո՛չ էլ վերջնական արդյունքների առումով: Այնպես որ, իր հայտարարությամբ Պուտինը բավականին արդյունավետ ձեւով հաստատում է, որ Հայաստանը կոնկրետ քայլերի կդիմեր (ներառյալ հանրաքվե կազմակերպելը), եթե իրոք ցանկանար շրջադարձ կատարել դեպի Եվրոպա:

Նման հայտարարության ընդլայնված նպատակը, ուրեմն, հանրության գիտակցության մեջ ամրագրելն է այն միտքը, որ ՀՀ-ն ո՛չ ցանկանում, ո՛չ էլ իրականում կարող է շրջադարձ կատարել դեպի ԵՄ: Պատճառները մի քանիսն են: Գլխավորը անշուշտ տնտեսական խորը հարաբերություններն են ՀՀ-ի եւ ՌԴ-ի, ինչպես նաեւ ՀՀ-ի եւ ԵԱՏՄ-ի միջեւ, նաեւ երկու պետությունների միջեւ առեւտրաշրջանառության չափերը, որոնց թվային արտահայտությունները չափազանց կարեւոր են:

Ակներեւ է, որ ԵՄ-ի ինտեգրման գործընթացը ներկայիս Հայաստանի համար անիրական է, հաշվի առնելով տնտեսական համակարգում առկա էական տարբերությունները, ԵՄ-ի հետ միասնական սահմանների բացակայությունը եւ տնտեսական ինտեգրման հեռանկարի սահմանափակումները: Եթե հայ-թուրքական սահմանը բաց լիներ, եւ կամ Թուրքիան, կամ Վրաստանը ԵՄ անդամ լինեին, շատ ավելի հեշտ կլիներ ՀՀ-ի համար առաջ շարժվել դեպի ԵՄ անդամակցություն: Բայց ներկա պայմաններում նման սցենարը անհավանական է թվում:

Միեւնույն ժամանակ անհրաժեշտ է գիտակցել, որ նոր անդամներ ընդունելու ԵՄ-ի բյուրոկրատական եւ ինստիտուցիոնալ գործընթացները չափազանց բարդ են: Այս առումով վառ օրինակներ կարող են ծառայել Վրաստանն ու Ուկրաինան, որոնք երկու տասնյակ տարիներ պայքարում են այդ ուղղությամբ, բայց հաջողության չեն հասել:

Մյուս կողմից, դժվար է պատկերացնել, որ ԵՄ-ն ինքը ներկայիս պատրաստ է Ռուսաստանի հետ լարվածության մի նոր թեժ կետ առաջացնել Հարավային Կովկասում, որտեղ խաղաղությունը խիստ փխրուն է: Այս բոլոր գործոնները հավանաբար շատ հանգամանալից կերպով քննարկվել են Մոսկվայում եւ հանգել այն եզրակացության, որ տեսանելի ապագայում Հայաստանը չի դառնա ԵՄ անդամ: Հենց այս հիման վրա էլ Ռուսաստանը ձեւավորում է իր դիրքորոշումը:

Անգլ. բնագրից թարգմանեց՝
ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ
(The Armenian Mirror Spectator)

## Իմաստաբանական բառարան

### *«Ուրիշ հնար չկա»*

Պատը մարդկության ստեղծած ամենահին կառույցներից է: Այն կարող է պաշտպանել, բայց կարող է նաեւ բաժանել մարդկանց:

Պատմությունը բազմաթիվ պատեր է հիշում՝ քոչվորների հարձակումներից պաշտպանվելու համար կառուցված Չինական Մեծ պատը, հրեաների հոգեւոր միասնությունը խորհրդանշող Լացի պատը, Հռոմեական կայսրության սահմանները պաշտպանող **Հադրիանոսի** եւ **Անտոնինոսի** պատերը: Պատմությունը հիշում է նաեւ երկրորդ համաշխարհայինից հետո նույն ժողովրդի բաժանման խորհրդանիշ դարձած Բեռլինյան պատը:

Իսկ ո՞վ գիտի հայկական պատի մասին: Կարծում եմ՝ քչերը:

Մեր բազմադարյա պատմության ընթացքում կառուցված ամենաբարձր ու անհաղթահարելի պատը, որը պառակտում է առաջացրել մեր ազգի տարբեր հատվածների միջեւ, «անվստահության պատն» է:

Ըստ երեւույթին՝ մեծ բանաստեղծ **Համո Սահյանն** անվստահության պատը նկատի չի ունեցել, երբ գրում էր.

*«Պատը շարվի պտտի,*
*Ուրիշ հնար չկա...»*

Հազար անգամ ներողություն հայցելով բանաստեղծից, այն վերաշարադրում եմ.

*«Պատը քանդվի պտտի,*
*Ուրիշ հնար չկա...»*

Խոսքս անվստահության պատի մասին է: Չէ՞ որ մեր աչքի առաջ անվստահության պատ է գոյացել հայաստանցիների ու արցախցիների միջեւ: Պատ է գոյացել տարբեր պատկերացումներով պատերազմի գնացող հավատացյալների միջեւ, շռայլորեն տրվող խոստումներին հավատացողների եւ կասկածամիտ մարդկանց միջեւ: Պատ է գոյացել նախկինում միմյանց հոգսերին հաղորդակից, իսկ այսօր ներհակ գաղափարներ դավանող բարեկամների միջեւ...

Եվ հենց այդ պատճառով առավել հավատով կրկնում եմ Սահյանի մեկ այլ միտքը.

*«Խավարը գրվի պտտի,*
*Ուրիշ հնար չկա...»*

Գ.ԱՌԱՔԵԼՅԱՆ

## «Վրաստան. ինտեգրացման օրակարգի ղեկը Թուրքիան է վարում»

Վրաստանում դանդաղ, բայց անշեղորեն առաջ է տարվում Ռուսաստանի պլաններին այլընտրանքային ինտեգրացման օրակարգ, թելեգրամյան ալիքում գրում է աբխազ կին գրող եւ բլոգեր **Էլյա Ձիկիրբան**: Նրա խոսքով, «դրանում ղեկը վարում է Թուրքիան, մյուսները նրան միացողներ են»: Բլոգերի գրառումը ներկայացված է «Եվրասիա դեյլի» լրատվական գործակալության կայքում:

«Արեւմտամետներին, իհարկե, մեծապես խանգարել է նախկինում իրենց թույլ տված ռազմավարական սխալը: Նրանք չկարողացան ժամանակին չեզոքացնել կրոնական պետերին՝ նույն Իլիային եւ նրա շրջապատին: Հայաստանում... Փաշինյանը (հեղինակի որակումը չկրկնեցինք - Գ. Մ.) խախուլներից հետո սկսեց հենց դրանից՝ չեզոքացնելով կաթողիկոսին: ՌԴ-ի հետ կապերը խզել հարկավոր է նաեւ նրա հետ միասնական ուղղափառ կրոնի միջոցով: Վրացիների պարագայում դա չստացվեց, բայց մնացած մասով արեւմտահակ Կովկասը պոկելու աշխատանքն անընդհատ շարունակվում է»,- հայտարարել է Ձիկիրբան: Այդուամենայնիվ, նրա խոսքերն է մեջբերում լրատվականը, «ռուսիչները շատ դանդաղ եւ ճռինչով, բայց նույնպես սկսում են հասկանալ, որ ուրիշների համար ջանալը (խորհրդային խոսույթ) անշնորհակալ եւ անմիտ գործ է»:

«Եվ Չինաստանի օրինակով նրանք, կարծես, դառնում են հենց այն իրատեսորեն հասկացողները թե՝ ոչ ոք մեզ ընկեր չէ, այլ միայն՝ դաշնակից: Կամ թշնամի: Եվ դա է ամբողջը»,- Ձիկիրբայի եզրափակիչ կարծիքն է բերում կայքը:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ» ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ –ի
2025 թվականի ֆինանսական հաշվետվություն

| ՄՈՒՏՔ | |
|---|---|
| 1. Արտադրանքի իրացումից հասույթ | 693,030 |
| 2. Ծառայությունների մատուցումից հասույթ | 290,000 |
| 3, Անհատույց ստացվող ակտիվներ | 32,243,120 |
| 4. Այլ եկամուտներ | 0 |
| **Ընդամենը մուտք** | **33,226,150** |
| **ԾԱԽՍ** | |
| 1. Իրացված արտադրանքի արտադրության հետ անմիջականորեն կապված ծախսեր | 293,886 |
| 2. Աշխատավարձ եւ դրան հավասարեցված ծախսեր | 29,094,957 |
| 3. Գործունեության հետ կապված վարչական ծախսեր | 1,908,006 |
| 4.Ապրանքների, սեփական արտադրանքի և այլ ակտիվների, ծառայությունների իրացման հետ կապված ծախսեր | 64,870 |
| 5. Այլ ծախսեր | 1,864,431 |
| **Ընդամենը ծախս** | **33,226,150** |
| **Հարկվող շահույթը** | **0** |
| **Հաշվետու տարվա շահութահարկի գումարը** | **0** |

«ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ» ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ –ի
տնօրեն՝ Սարախյան Արա

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԼԵ տարի
Հրատարակիչ
**«ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ»**
**սոցիալ-մշակութային**
**հիմնադրամ**
Երեւան, Սայաթ-Նովա 21Ա,
Տարածք 48, Երեւան 0001
**e-mail:** info@azg.am
azgdaily@gmail.com
**www.azg.am**
*Գլխաւոր խմբագիր*
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ
*Հաշվապահութիւն (գովազդ)*
հեռ. **091 582960**
*Համակարգչային շարուածքը՝*
«Ազգ» թերթի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN
Phone: 374 010 582960

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Վահան Թեքեյան» սոցիալ-մշակութային հիմնադրամ», Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001: Պետական գրանցման վկայականի համարը՝ 286.110.1041780, տրուած՝ 25.10.2018 թ.: Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 27.05.2026, գինը՝ 200 դրամ, տպաքանակը՝ 500 օրինակ, տպագրւում է «ՎԱՆ ԱՐՅԱՆ» հրատարակչատանը, ք. Երեւան, Բաղրամյան 3: